

ՀԱՄԱՁՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև ֆինանսական համագործակցության վերաբերյալ («Էներգետիկայի բնագավառում անհապաղ օգնության միջոցառումներ (Քանաքեռի հիդրոէլեկտրակայան)» նախագիծ)

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը,

Ելնելով Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև առկա բարեկամական հարաբերություններից,

կամենալով ամրապնդել և խորացնել առկա բարեկամական հարաբերությունները գործընկերային համագործակցության միջոցով,

գիտակցելով, որ այդ հարաբերությունների պահպանումը սույն Համաձայնագրի հիմքն է կազմում,

մտադրություն ունենալով նպաստել Հայաստանի Հանրապետության սոցիալական և տնտեսական զարգացմանը և կենսագործել երկու երկրների կառավարությունների միջև 1996 թվականի մայիսի 7-ին Երևանում կայացած բանակցությունների արդյունքները,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

1. Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը հնարավորություն է ընձեռում Հայաստանի Հանրապետության կառավարությանը Մայնի Ֆրանկֆուրտի Վերականգնման վարկային հաստատությունից «Էներգետիկայի բնագավառում (Քանաքեռի հիդրոէլեկտրակայան) անհապաղ օգնության ծրագիր» նախագծի իրականացման համար մինչև 15.000.000 (բառերով՝ տասնհինգ միլիոն) գերմանական մարկ գումարի վարկ ստանալ, եթե այն քննության առնելուց հետո հավաստվում է, որ նախագիծը խրախուսման արժանի է:

2. Եթե Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը հնարավորություն է ընձեռում հետագայում ևս Մայնի Ֆրանկֆուրտի Վերականգնման վարկային հաստատությունից վարկեր կամ ֆինանսական նպաստներ ստանալ նախածի նախապատրաստման կամ նախագծի իրականացման և խնամատարության նպատակով ձեռնարկվող հարակից միջոցառումների համար, ապա կիրավում է սույն Համաձայնագիրը:

3. 1-ին պարբերությունում նշված նախագիծը կարող է Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության կառավարությունների փոխադարձ համաձայնությամբ փոխարինվել այլ նախագծերով: Նախապատրաստական և հարակից միջոցառումների իրականացման համար 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն տրամադրվող ֆինանսական նպաստները փոխարկվում են վարկի, եթե չն

օգտագործվում
նպատակով:

հիշատակված

միջոցառումների

իրականացման

Հոդված 2

1. 1-ին հոդվածում նշված գումարի կիրառումը և տրամադրման պայմանները, ինչպես նաև պատվերի հանձնարարման կարգը սահմանվում են Վերականգնման վարկային հաստատության (KFW) և վարկառուի միջև կնքվելիք պայմանագրով, որոնք ենթակա են Գերմանիայի Դաշնակցային Հանրապետության գործող օրենսդրական նորմերին:

2. 1-ին հոդվածում նշված գումարի տրամադրման վերաբերյալ համաձայնությունն անվավեր է համարվում, եթե տրամադրման տարուց սկսած 8 տարվա ընթացքում համապատասխան վարկային պայմանագիր չի կնքվում: 1-ին հոդվածում նշված գումարի համար համապատասխան ժամկետը լրանում է 2005 թվականի տարեվերջին:

3. Եթե վարկառուն ինքը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը չէ, ապա երաշխավորում է ի դեմս Վերականգնման վարկային հաստատության բոլոր վճարումները գերմանական մարկով՝ ի կատարումն 1-ին պարբերության համաձայն կնքվելիք պայմանագրերով վարկառուների ստանձնած պարտավորությունների:

Հոդված 3

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Վերականգնման վարկային հաստատությանը (KFW) ազատում է այն բոլոր հարկերից և պետական այլ տուրքերից, որոնք բխում են Հայաստանի Հանրապետությունում 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունում հիշատակված պայմանագրի կնքումից և իրականացումից:

Հոդված 4

Վարկի կամ ֆինանսական նպաստների տրամադրումից բխող՝ ցամաքով ջրով և օդով իրականացվող՝ մարդկանց և ապրանքների փոխադրումների պարագայում Հայաստանի Հանրապետության կառավարությունը ուղևորներին և առաքողներին տրամսպորտային ծերնարկությունների ազատ ընտրության հնարավորություն է ընձեռում, չի ծերնարկում այնպիսի միջոցներ, որոնք բացառում կամ խոչընդոտում են Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում տեղակայված տրամսպորտային ծերնարկությունների իրավահավասար մասնակցությունը փոխադրումների իրականացմանը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում այդ ծերնարկությունների մասնակցությունն արտոնող թույլտվություններ է տալիս:

Հոդված 5

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվանից, եթե Հայաստանի Հանրապետության կառավարությունը ծանուցում է, որ ավարտված է իրավական ուժ ստանալու համար օրենքով սահմանված ներպետական ընթացակարգը: Հիմք է ընդունվում ծանուցման ստացման օրը:

Կատարված է Երևան քաղաքում 1997 թվականի հունիսի 25-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և գերմաներեն, ընդ որում Երկու տեքստերն էլ հավասարագոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1998 թվականի փետրվարի 9-ից: